ISSN 0002-306X. ՀԳԱԱ և ՀԱՊՀ Տեղ. Տեխն. գիտ. սերիա. 2016. Հ. LXIX, N 2.

ՎԱԶԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ

60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Լրացավ ՀԱՊՀ-ի «Միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր» (ՄՍ և Հ) միջֆակուլտետային ամբիոնի վարիչ, «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ ուսումնական

դեպարտամենտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ նախագահի մրցանակի դափնեկիր, տ.գ.դ., պրոֆեսոր Վազգեն Շավարշի Մելիքյանի ծննդյան 60- ամյակը:

Վազգեն Մելիքյանը 1978թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Տեխնիկական կիբեռնետիկա» ֆակուլտետը: 1984թ. Մոսկվայի ինժեներաֆիզիկական ինստիտուտում ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, մեկ տարի անց՝ դոցենտի գիտական կոչում, 2006թ.՝ տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան և նույն տարում՝ պրոֆեսորի գիտական կոչում: 2010թ. ընտրվել է ՀՀ ճարտարագիտական ակադեմիայի ակադեմիկոս, 2014թ.՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ:

Վ. Մելիքյանը 6 մենագրությունների, 250-ից ավելի գիտական և 130-ից ավելի մեթոդական աշխատանքների հեղինակ է, միջազգային գիտաժողովներում հանդես է եկել 150-ից ավելի զեկուցումներով: Տարբեր միջազգային գիտաժողովներում բազմիցս արժանացել է «Լավագույն հոդված» մրցանակի: Վ.Շ.Մելիքյանի գիտական աշխատանքները տպագրվում են բարձր վարկանիշ ունեցող միջազգային ամսագրերում, զեկուցվում են միջազգային գիտաժողովների պլենար նիստերում: Նրա ղեկավարությամբ հաջողությամբ պաշտպանվել են 43 թեկնածուական ատենախոսություններ, ղեկավարել է 170-ից ավելի մագիստրոսական թեզեր և շուրջ 300 դիպլոմային ու ավարտական աշխատանքներ: Հաջողությամբ ղեկավարել է բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտական և կրթական նախագծեր: Ստացել է բազմաթիվ պետական և գերատեսչական մեդալներ, ՀԱՊՀ գովեստագիր, ոսկե մեդալ, Երևանի պետական համալսարանի պատվոգիր: Մի շարք բուհերի, այդ թվում՝ նաև Մոսկվայի էլեկտրոնային տեխնիկայի ինստիտուտի պատվավոր պրոֆեսոր է, բազմաթիվ միջազգային հեղինակավոր գիտական պարբերականների խմբագրական կոլեգիաների անդամ, միջազգային գիտաժողովների ծրագրային հանձնաժողովների անդամ կամ

բաժանմունքի ղեկավար, ատենախոսությունների պաշտպանությունների մասնագիտական խորհուրդների անդամ, Միկրոէլեկտրոնիկայի հայաստանյան ամենամյա միջազգային օլիմպիադայի ծրագրային կոմիտեի նախագահ: Եղել է SS ոլորտում համաշխարհային հեղինակություն վայելող ՀՀ նախագահի մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամ: Գիտության և տեխնոլոգիայի ոլորտում ՀՀ նախագահի մրցանակի հանձնաժողովի անդամ է, SS բնագավառում լավագույն ուսանողներին և աշակերտներին շնորհվող ՀՀ Նախագահի կրթական պարգևների մրցանակաբաշխության հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը:

ՄՍ և Հ միջֆակուլտետային ամբիոնի ստեղծման պահից (2001 թ.) առ այսօր ամբիոնի վարիչ է, ՀԱՊՀ-ի և էլեկտրոնային ավտոմատացված նախագծման բնագավառի համաշխարհային առաջատար «Սինոփսիս» ընկերության հետ համատեղ իրականացվող ու համընդհանուր բարձր գնահատականի արժանացած «բուհ – արտադրություն» կրթական մոդելի հիմնական իրագործողը: Նրա կողմից ստեղծված ուսումնական նյութերը լայնորեն կիրառվում են բազմաթիվ երկրների առաջատար բուհերի ուսումնական գործընթացում: Վ.Շ. Մելիքյանը հաճախ հրավիրվում է արտերկրի բազմաթիվ հայտնի համալսարաններ՝ դասախոսություններ վարելու համար:

«Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ում Վ. Մելիքյանի 60-ամյա հոբելյանին նվիրված միջոցառման ներկաները՝ հայաստանյան առաջատար բուհերի ռեկտորներ, պրոռեկտորներ, SS ոլորտի առաջատար ընկերությունների տնօրեններ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ, «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ մենեջերներ, բարձր գնահատեցին Վ.Շ. Մելիքյանին՝ որպես գիտնականի, կրթության բնագավառի մասնագետի և մարդու: «Գիտության բնագավառում ունեցած ձեռքբերումների և համալսարանական կրթության զարգացման գործում ունեցած զգալի ավանդի համար» Վ.Շ. Մելիքյանը պարգևատրվեց ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի պետական համալսարանի, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի, Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի և «Վիվասել» ընկերության ոսկե մեդալներով:

Հանդեսի խմբագրական կոլեգիան շնորհավորում է հոբելյարին ծննդյան օրվա կապակցությամբ և ցանկանում նրան քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ: